

## Հաղորդակցելով բարեվարքությունը լսարաններում. արդյո՞ք մեր ձեռնարկումները բավարար են

Խորհրդատվական աշխատաժողով

Շաբաթ, հոկտեմբերի 7, 2017 թ.

«Անի պլազա» հյուրանոց, Բիզնես կենտրոն, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն  
(Մայաթ-Նովա 19, Երևան)

Կոռուպցիայի դեմ պայքարի ժամանակակից միտումներից մեկը հանրային իրազեկվածության բարձրացման կարևորումն է: Տարածված է այն կարծիքը, թե ուսանողները կդառնան կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժող ու կկարևորեն ակադեմիական բարեվարքությունը, երբ հաղորդակից լինեն սոցցանցերով, հեռուստատեսությամբ պարբերաբար հնչեցվող հակակոռուպցիոն ուղերձների:

Մակայն հակակոռուպցիոն արշավները հաճախ չեն թիրախավորում կոռուպցիայի ու բարեվարքության խախտման այնպիսի ձևեր, ինչպիսիք են գրագողությունը կամ խարդախությունը:

Իսկ երբևէ մտածո՞ւմ ենք, թե որքանով են հակակոռուպցիոն արշավներն ազդում ուսանողների ու դասախոսների վրա: Արդյո՞ք մենք հաղորդակցման ճիշտ ուղիներ ենք ընտրում ակադեմիական բարեվարքության մասին խոսելիս:

Հոկտեմբերի 7-ին՝ ժամը 10:30, «Ապելլա ինստիտուտը» կազմակերպում է եռաժամ աշխատաժողով, որի ընթացքում հաղորդակցման, կրթության ոլորտի մասնագետները քննարկելու են հակակոռուպցիոն արշավների լավագույն և վատագույն փորձը, ինչպես նաև փնտրելու են ուղիներ, որոնք կօգնեն ուսանողներին ընդգրկվել ակադեմիական բարեվարքության համար պայքարում: Ներկայացվելու են նաև «Ակադեմիական բարեվարքության հաքաթոնի» հաղթող թիմերի արշավների նախագծերը:

Աշխատաժողովն անց է կացվելու «Չեթհեմ Հաուզ»-ի կանոնով:

### Ծրագիր

**10:15-10:30** Գրանցում/ սուրճի հյուրասիրություն

**10:30-10:40** Ողջույնի խոսք, ծրագրի և մասնակիցների ներկայացում

Վիկտորյա Այդինյան, Ապելլա ինստիտուտ

Լիանա Ամիրբեկյան, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ

**10:40-10:50** Բացման խոսք. «Ռուք ստանո՞ւմ եք իմ հաղորդագրությունը: Ինչպե՞ս ենք մենք խոսում կոռուպցիայի մասին»

Աննա Գևորգյան, կրթական քաղաքականության մասնագետ

**10:50-11:30 «Ակադեմիական բարեվարքության հաքաթոն»-ի ներկայացում**  
Վիկտորյա Այդինյան, Ապելլա ինստիտուտ, և հաղթող թիմերի ներկայացուցիչներ

**11:30-12:30 Ինչպե՞ս բարձրացնել հակակոռուպցիոն հաղորդակցման արդյունավետությունը. Առկա փորձի և մեխանիզմների քննարկում (քննարկումն ընթանում է փոքր խմբերով)**

Քննարկման այս փուլի նպատակն է փոքր խմբերով դիտարկել պետական ինստիտուտների, միջազգային կազմակերպությունների, երիտասարդական խմբերի կողմից կրթության ոլորտում կազմակերպված հակակոռուպցիոն արշավների հաջողված և ձախողված փորձերը:

Որո՞նք էին հաջողության/ձախողման պատճառները: Ո՞ր ուղերձներն ու միջոցներն են ամենաարդյունավետը: Որքա՞ն հաջողված էին ուսանողներին ընդգրկելու փորձերը: Որո՞նք են կրթության ոլորտում հակակոռուպցիոն արշավների կազմակերպման հիմնական խոչընդոտները, խնդիրները և ծուղակները: Ինչպե՞ս է հնարավոր հետաքրքրել ավելի մեծ լսարանի: Ի՞նչ քայլեր է պետք ձեռնարկել Հայաստանում հակակոռուպցիոն արշավները բարելավելու համար:

Մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացնում է իր փորձառությունն ու կարծիքը:

**12:30-14:00 Խմբային քննարկումների ամփոփում և ընդհանուր քննարկում**

Առանձին խմբերի զեկուցողները ներկայացնում են իրենց խմբային քննարկման արդյունքները, ինչին հաջորդում են նոր քննարկումներ

**Մոդերատոր. Աննա Գևորգյան, կրթական քաղաքականության մասնագետ**

*Աշխատաժողովն իրականացվում է «Հանրային քաղաքականության վերլուծության և երկխոսության Ապելլա ինստիտուտ»-ի կողմից «Զորեղացնելով հաջորդ սերնդին, ծավալելով ակադեմիական բարեվարքության մասին երկխոսություն Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն աջակցվում է Եվրոպայի խորհրդի և Եվրամիության «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» համատեղ ծրագրի կողմից:*

Partnership for Good Governance  
Գործընկերություն հանուն լավ կառավարման



